ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի մայիսի 25-ից 27-ը

Ղրղզստանի Հանրապետություն (ք. Բիշքեկ) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝ Աշոտ Մուրադյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝ ս.թ. մայիսի 25-ից 27-ը, Ղրղզստանի Հանրապետություն (ք. Բիշքեկ):

4. Հրավիրող կողմը՝ 2022 թվականի մայիսի 26-ից 27-ը ք. Բիշքեկում (Ղրղզստանի Հանրապետություն) Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի շրջանակներում նախատեսվող Եվրասիական տնտեսական ֆորում-2022-ին մասնակցելու, միաժամանակ՝ ԵՏՀ Խորհրդի կողմից ընդունված որոշման համաձայն, ս.թ. մայիսի 26-ին անցկացվող ԵԱՏՄ անդամ պետությունների մաքսային ծառայությունների միացյալ կոլեգիայի ամենամյա 38-րդ նիստին ներկա գտնվելու հրավերները ստացվել են ԵԱՏՄ անդամ պետությունների մաքսային ծառայությունների միացյալ կոլեգիայի և Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի կողմից:

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

2022 թվականի մայիսի 26-ից 27-ը ք. Բիշքեկում (Ղրղզստանի Հանրապետություն) Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի շրջանակներում տեղի է ունեցել Եվրասիական տնտեսական ֆորում-2022-ը: Միաժամանակ՝ ԵՏՀ Խորհրդի կողմից ընդունված որոշման համաձայն, ս.թ. մայիսի 26-ին անցկացվել է ԵԱՏՄ անդամ պետությունների մաքսային ծառայությունների միացյալ կոլեգիայի ամենամյա 38-րդ նիստը, որտեղ ՀՀ ներկայացուցչի մասնակցությունը հնարավորություն է ընձեռել արտահայտելու ՀՀ դիրքորոշումը ոլորտային կարևոր հարցերի վերաբերյալ:

6. Քննարկված թեմաները՝

Ֆորում-2022-ին և ԵԱՏՄ անդամ պետությունների մաքսային ծառայությունների միացյալ կոլեգիայի 38-րդ նիստին քննարկվել են հետևյալ հարցերը.

1. Արտաքին առևտրի ոլորտում փորձի փոխանակման և այդ ոլորտի զարգացման վերաբերյալ երկխոսություն ծավալելու մասին:

2. Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջև տնտեսական համագործակցության ամրապնդմանն ուղղված գործողությունների մասին:

3. Անդամ պետությունների տնտեսվարող սուբյեկտների միջև համագործակցային կապերի ձևավորման և այդ կապերի հետագա զարգացման համար բարեհաջող միջավայրի ստեղծման մասին:

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միացյալ խորհրդի գործողությունների ծրագիրն իրականացվել է հետևյալ հիմնական կետերի շուրջ.

- Արգելքների և սահմանափակումների պահպանման ապահովում (մտավոր սեփականության պաշտպանության մասին):
- Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների մաքսային մարմիններում ռիսկերի կառավարման համակարգի մշակման մասին:
- Քննարկվել են մաքսային մարմինների կողմից գանձվող մաքսային և այլ վճարումների վարման և դրանց անվտանգության կիրառման կարգի բարելավման հարցերը:
- Քննարկվել են ապրանքների բացթողումից հետո մաքսային հսկողության մշակման և կիրառման հարցերը:
- Քննարկվել են մաքսային ոլորտում Եվրասիական տնտեսական միության ընդհանուր գործընթացների տեղեկատվական և տեխնիկական աջակցության հարցերը:
- Ներկայացվել են մաքսային փորձաքննության և փորձագիտական ուսումնասիրությունների վերաբերյալ հարցերը:
- Անդրադարձ է կատարվել ապրանքների դասակարգման հարցին:
- Քննարկվել և վերծանվել են միասնական տարանցիկ համակարգի կատարելագործման եւ մատակարարման շղթայի անվտանգության ապահովման հարցերը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Բիշքեկում անցկացվող Եվրասիական տնտեսական առաջին համաժողովի շրջանակում ՊԵԿ նախագահի տեղակալ Աշոտ Մուրադյանը մասնակցել է նաև «ԵԱՏՄ

համագործակցության նոր ուղղություններ» թեմայով պանելային քննարկմանը: Աշոտ Մուրադյանը, անդրադառնալով մաքսային ծառայությունների թվայնացման անհրաժեշտությանը, կարևորել է գործընթացում ժամանակակից լուծումների կիրառումը, ինչը հնարավորություն կտա առավելագույնս բարձրացնել մաքսային վարչարարության արդյունավետությունը: Աշոտ Մուրադյանի դիտարկմամբ՝ ԵԱՏՄ անդամ երկրների մաքսային ծառայությունների միջև արագ տեմպերով զարգանում է տեղեկատվական փոխգործակցությունը, ինչը համահունչ է ԵԱՏՄ անդամ երկրների միջև առևտրաշրջանառության աճին: ՊԵԿ նախագահի տեղակալը ներկայացրել է նաև մաքսային մարմինների թվայնացման արդյունքում ստեղծվող հնարավորությունները, որոնք կնպաստեն մաքսային ծառայությունների արդյունավետ և թիրախային մատուցմանը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Նիստի ընթացքում, ընդհանուր առմամբ, ստորագրվել է 12 որոշում, որոնք վերաբերում են մաքսային գործի տարբեր բնագավառներին, այդ թվում՝ Եվրասիական տնտեսական միության սահմանային անցակետերում տրանսպորտային (ավտոմոբիլային) վերահսկողության կատարելագործմանը, ֆիզիկական անձանց կողմից մասնատված տեսքով ապրանքների ներմուծմանը:

Ընդունված որոշումները վերաբերում են նաև Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների ժամանակավոր ներմուծման ժամանակ ֆիզիկական անձանց մշտական բնակության վայրը հաստատող փաստաթղթերին և տեղեկություններին, լիազորված տնտեսական օպերատորների կողմից ԵԱՏՄ մաքսային օրենսգրքով նախատեսված հատուկ պարզեցման կիրառմանը, մաքսային տարանցում մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների բացթողնման ժամանակ տրանսպորտային, առևտրային և այլ փաստաթղթերում մաքսային մարմինների կողմից նշումներ չկատարելու դեպքերին առնչվող մի շարք հարցերին:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Որոշում է կայացվել Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի հաջորդ՝ 39-րդ նիստն անցկացնել 2022 թվականին, Հայաստանի Հանրապետությունում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

01.06.2022թ. **ԱՇՈՏ ՄՈՒՐԱԴՅԱՆ**